ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՂԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Գեղամ Վարդանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   2020 թվականի հունվարի 16-17-ը, Ռուսաստանի Դաշնություն քաղաք Մոսկվա:

4. **Հրավիրող կողմը.**

   Եվրասիական տնտեսական հանձնաժողով (ԵՏՀ):

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կոլեգիայի նոր կազմում ընդգրկվելու կապակցությամբ ԵՏՀ կոլեգիայի գործող ղեկավար կազմի հետ կայանալիք հանդիպումներին:

6. **Քննարկված թեմաները.**

   2020թ. հունվարի 17-ին Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը Ռուսաստանի Դաշնություն Մոսկվա քաղաքում մասնակցել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կոլեգիայի նոր կազմում ընդգրկվելու կապակցությամբ ԵՏՀ կոլեգիայի գործող ղեկավար կազմի հետ կայացած հանդիպումներին: Մասնավորապես, տեղի է ունեցել հանդիպում ԵՏՀ կոլեգիայի անդամ, ներքին շուկաների, տեղեկատվայնացման, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների գծով գործող նախարար (Նախարար) Կարինե Մինասյանի հետ:

   Քննարկվել են Նախարարի լիազորությունները Գեղամ Վարդանյանին փոխանցելու վերաբերյալ ընթացակարգային հարցերը և կատարման ենթակա հետագա գործողությունները: Դրանք ներառում են Հանձնաժողովի 2020թ. օրակարգում ընդգրկված կետերը, որոնց կատարումը և համակարգումը ստանձնվել է Նախարարի կողմից, մասնավորապես՝ ընթացիկ և ապագա նախագծերը, մասնակից-պետություններին շրջանառված հանձնարարականներով սահմանված առաջադրանքները և խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկությունները, որոնք առնչվում են ինչպես ներքին շուկաների, այնպես էլ տեղեկատվայնացման, տեղեկատվական և հաղորդակցական

տեխնոլոգիաների, ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի զարգացմանը, որպես ամբողջության: Տեղում ճշտվել են Նախարարի ենթակայության տակ գտնվող աշխատողների թիվը և որակավորումը, ուսումնասիրվել են ներքին շուկաների գործունեության օպտիմալացման տարբեր սցենարներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նախարար Կարինե Մինասյանի հետ հանդիպումից բացի Նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը հանդիպում է ունեցել Նախարարի աշխատակազմի ղեկավար Վ. Բավեյանի հետ, որի ընթացքում քննարկվել են 2020 թվականի ընթացքում իրականացման ենթակա նախագծերը, Նախարարության գործունեության կառուցվածքին, աշխատանքային հոսքին և փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային հարթակը, ներքին աշխատանքային կարգուկանոնին:

Հանդիպում է կայացել Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ղեկավար Հ. Կարայանի հետ, որի ընթացքում վերջինիս հետ քննարկվել են վարչությանը սպասվող առաջին հանձնարարականները, Նախարարության առջև ծառացած հիմնական առաջադրանքները և խնդիրները, դրանց հնարավոր լուծումները, ընթացիկ նախագծեր և ծրագրերը: Հ. Կարայանը ներկայացրել է 2020 թվականի համար երկարաժամկետ ծրագրերի վերաբերյալ համառոտ զեկույց:

«A.G.A.N Aircraft Industry»-ի ղեկավար Արսեն Գրիցկևիչի հետ հանդիպման ընթացքում ուսումնասիրվել են այնպիսի խնդիրների լուծման տարբերակները, ինչպիսիք են Եվրասիական Միության շուկա գյուղատնտեսական ինքնաթիռների մուտքը, Հայաստանում 4-5 տեղ ունեցող օդանավերի արտադրությունը, ինքնաթիռների արտադրությանն ուղղված հայ-ռուս-արաբական համատեղ նախագծի համար փաստաթղթերի մշակումը:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցը կրել է ճանաչողական բնույթ, որի ընթացքում կայացած հանդիպումները հիմնականում նախատեսված են եղել տեղեկատվության փոխանակման համար:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Գեղամ Վարդանյան

22.01.2020թ.